## ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| ԹԵՐԹ | ԱՆՎԱՆՈՒՄ | ԾԱՆՈԹ. |
|---|---|---|
| ՋՕ-1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՍԿԻԶԲ) | |
| ՋՕ-2 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՎԵՐՋ) | |
| ՋՕ-3 | ՋԵՌՈՒՑՈՒՄ: ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-4 | ՋԵՌՈՒՑՈՒՄ:ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-5 | ՋԵՌՈՒՑՈՒՄ:ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-6 | ՁԱԽ ԹԵՎԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԵՎ Ն1,Ն2 ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՍԽԵՄԱ | |
| ՋՕ-7 | ԱՋ ԹԵՎԻ ԵՎ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ, Ն3,Ն3,Ն5 ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ | |
| ՋՕ-8 | ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-9 | ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-10 | ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-11 | ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: ՁԵՂՆԱՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| ՋՕ-12 | ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԽԵՄԱՆԵՐ | |
| ՋՕ-13 | Ն1-Ն5 ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅԱՆՔՆԵՐ | |
| | | |

## ՋԵՌՈՒՑԻՉ-ՕԴԱՓՈԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Համա-կարգի նշանա-կում | Համա-կարգի քանակ | Սպասարկվող սենյակի անվանում (համար) | Օդափոխիչ,լավորակիչ | | | | | Ջերմափոխանակիչ / Ջրային օդատաքացուցիչ | | | | Զտիչ (KF3 ներդիրով) | Ձայնախլացուցիչ | Ծանոթ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կայանքի, ագրեգատի տեսակ | L $մ^3/ժ$ | P պա | N վտ/Ֆ | n պտ/ր | Ագրեգատի տեսակ | Տաքացման ջերմաստիճան,$^0C$ -ից | մինչև | Ջերմուբ. ծախսը կվտ | | | |
| Ն1 | 1 | Ճաշասրահ | RP50-30/25-4D | 1100 | 395 | 1004/3 | 1450 | VO 50-30/2R | -19 | 16 | 12.9 | KFD 50-30 | TKU 50-30 | REMAK |
| Ն2 | 1 | Դահլիճ | RP80-50/40-6D | 4000 | 445 | 2824/3 | 960 | VO 80-50/2R | -19 | 18 | 49.6 | KFD 80-50 | TKU 80-50 | REMAK |
| Ն3 | 1 | Սպորտդահլիճ | RP70-40/35-6D | 2520 | 350 | 1096/3 | 920 | VO 70-40/2R | -19 | 15 | 28.7 | KFD 70-40 | TKU 70-40 | REMAK |
| Ն4 | 1 | Պարասրահ | RP50-30/25-4D | 1200 | 385 | 1004/3 | 1450 | VO 50-30/2R | -19 | 15 | 13.7 | KFD 50-30 | TKU 50-30 | REMAK |
| Ն5 | 1 | Արհեստանոցներ | RP50-25/22-4D | 900 | 300 | 590/3 | 1440 | VO 50-25/2R | -19 | 15 | 10.3 | KFD 50-25 | TKU 50-25 | REMAK |
| Ա1 | 1 | Խոհանոց | RP50-30/25-4D | 1300 | 375 | 1004/3 | 1450 | | | | | | TKU 50-30 | REMAK |
| Ա2 | 1 | Դահլիճ | RP80-50/40-6D | 4000 | 445 | 2824/3 | 960 | | | | | | TKU 80-50 | REMAK |
| Ա3 | 1 | Պարասրահ | RP50-30/25-4D | 1330 | 375 | 1004/3 | 1450 | | | | | | | |

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| T1 | Ջեռուցման մատակարարող խողովակ |
| T2 | Ջեռուցման հետադարձ խողովակ |
| 500x700 | Ջեուցման պանելային մարտկոցը հատակագծում |
| 9 | Ջեուցման պանելային մարտկոցը սխեմայում |
| L=1800 | Հատակային ջեուցիչ |
| | Փական |
| | Փական դատարկման ծորակով |
| | Դատարկման ծորակ |
| | Օդահան ծորակ |
| 0.003 | Խողովակաշարի թեքություն |
| Ն1 | Օդափոխության ներածման համակարգ |
| Ա1 | Օդափոխության արտածման համակարգ |
| ԲԱ1 | Օդափոխության բնական արտածման համակարգ |
| ՏԱ1 | Օդափոխության տեղական արտածման համակարգ |
| Ճ200I | Արտածման և ներածման ճաղավանդակ |
| 300x200 / L=800 | Օդատարի չափսը / Օդաքանակ |

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երևանի թիվ 153 դպրոցի ջեռուցման և օդափոխության նախագիծն իրականացվում է համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետական - շինարարական գծագրերի և ՀՀ գործող նորմերի ու կանոնների՝ ՀՀՇՆ IV-12.02.01-04, СНиП 2.08.02-89, ՀՀՇՆ 31.03.01-2014 :

Ջեռուցման և օդափոխության համար հաշվարկային պարամետրերը հետևյալն են՝
$t_{արտ.}^{ձմեռ}$= -19°C, $t_{արտ.}^{ամառ}$= 34.8°C:

Նոր նախագծվող մասնաշենքի համար անհրաժեշտ ջերմափոխանցման գործակիցը պատերի համար ստացվել է K=0.43 վտ/$մ^2.^0C$, իսկ ծածկի համար՝ K=0.32 վտ/$մ^2.^0C$:

Սենյակների ջերմաստիճաններն ընդունված են համաձայն նորմերի:

Ջերմամատակարարումն իրականացվում է սեփական կաթսայատնից:

Դպրոցի ջերմային ծախսերը կազմում են

1.մարզադահլիճ $Q_{ջեռ.+օդ.}$=80կվտ,

2.հիմնական մասնաշենք $Q_{ջեռ.+օդ.}$=285կվտ:

Ջերմատարը ջուր է՝ $T_1$=80$^0$C և $T_2$=60$^0$C պարամետրերով:

Մասնաշենքերում նախատեսված է արհեստական շրջանառությամբ, երկխողովականի հորիզոնական մատակարարումով ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգեր:
Ջերմատարը յուրաքանչյուր հարկում հատակի վրայով անցնող մատակարարող խողովակներով բաշխվում է ջեռուցման մարտկոցներին առանձին - առանձին:

Որպես ջեռուցման սարքեր ընտրված են պանելային պողպատյա մարտկոցներ, 1-ին հարկի որոշ տեղերում հատակային ջեռուցիչներով:

Յուրաքանչյուր ջեռուցման սարքի մատակարարող առբերիչի վրա նախատեսված է ջերմության կարգավորիչ կափույր, իսկ հետադարձի վրա՝ փակող փական:

Օդահեռացումը համակարգից իրականացվում է մարտկոցների և բաժանարար սանրիկների վրա տեղադրված օդահան ծորակների միջոցով:

Մոնտաժման աշխատանքների ավարտից հետո ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավլիկական և ջերմային փորձարկման (12կգ $սմ^2$ ), որից հետո հատակի միջով անցնող խողովակները մեկուսացվում են ռետինե մեկուսիչով:

Դպրոցի հանդիսությունների դահլիճի, մարզադահլիճի, պարասրահի, արհեստանոցների և բուֆետի համար նախատեսված են մեխանիկական դրդմամբ օդափոխության ներածման և արտածման համակարգեր:

Օդափոխության համար օգտագործվել են "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել համարժեք պարամետրերով այլ համակարգով:
Դահլիճների օդափոխության համակարգերի սարքավորումները տեղադրված են ձեղնահարկում, իսկ բուֆետի, խոհանոցի և արհեստանոցների օդափոխության համակարգերը առաջին հարկի առաստաղի տակ:

Մնացած դասասենյակներում իրականացվում է բնական արտածում: Բնական արտածման օդատարերը բարձրանում են ձեղնահարկում 1մ և ծածկվում մետաղական ցանցով:

Սանհանգույցների օդատարերը հորաններով բարձրանում են տանիքից 1մ վերև:

Օդի ներածումը և արտածումը կատարվում է Ճ150, Ճ200 կարգավորիչ ճաղավանդակների միջոցով:

Օդափոխության համար օգտագործվել են ցինկապատ օդատարեր:

Օդափոխության համակարգերի բոլոր օդատարերը տանիքից դուրս ջերմամեկուսացվում են ֆոլգապատ ապակեբամբակով:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 153 ԴՊՐՈՑ | | | |
| ՆԳՃ | Մ. ՀՈՒՄՆՅԱՆ | | | | | |
| ՆԱԽԱԳԾՈՂ | Կ. ՍԱՀԱԿՅԱՆ | | ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՍՏՈՒԳՈՂ | Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | | | ԱՆ | ՋՕ-1 | 13 |
| | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՍԿԻԶԲ) | «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ | | |